

Հաստատված է՝
«Հայաստանի Հանրապետության
փաստաբանական դպրոց» հիմնադրամի
կառավարման խորհրդի
17.11.2021թ. թիվ 7/6-Լ որոշմամբ

Խորհրդի նախագահ՝ Սիմոն Բարսյան



ԿԱՐԳ ՈՒՆԿՆԴԻՐՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ՎՃԱՐՄԱՆ

ք. Երևան
2021թ.

1. «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամում (**այսուհետ՝ ՀՀ փաստաբանական դպրոց**) ուսուցումը կազմակերպվում է վճարովի հիմունքներով՝ ՀՀ փաստաբանական դպրոցի կառավարման խորհրդի (**այսուհետ՝ Խորհուրդ**) հաստատած չափերով:

2. **Ունկնդիրն ուսման վարձը վճարում է ՀՀ փաստաբանական դպրոցին անկանխիկ եղանակով՝ մասնագիտական ուսուցման մասին պայմանագիրը կնքելու պահից մինչև ուսուցման առաջին օրը**, եթե սույն կարգով այլ բան նախատեսված չէ:

3. ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրենի որոշմամբ ունկնդիրին կարող է թույլատրվել ուսման վարձը վճարել տարաժամկետ՝

1) մինչև վեց ամսով՝ ելնելով ունկնդրի սոցիալական կամ նյութական վիճակից.

2) վեց ամիսը գերազանցող ժամանակահատվածով (բայց ոչ ավել, քան տասնմեկ ամիսը)՝ գրավոր քննության 150 (մեկ հարյուր հիսուն) միավոր և բանավոր քննության գերազանց (18-20) գնահատական գրանցելու դեպքում:

4. Խորհրդի կողմից սահմանած անվճար տեղերի շրջանակում անվճար հիմունքներով սովորելու իրավունքից կարող է օգտվել՝

1) առաջին և երկրորդ խմբերի հաշմանդամ ունկնդիրները.

2) 25 տարին չլրացած երկկողմանի ծնողազուրկ ունկնդիրները.

3) զոհված զինծառայողի (ազատամարտիկի) զավակները.

4) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած զինծառայող ունկնդիրները:

5. ՀՀ փաստաբանական դպրոցում ուսուցում անցնող ունկնդիրների համար գործում է նաև ուսման վարձի զեղչ (ընդհանուր վճարից նվազեցվում է սույն կետում նշված տոկոսի չափով), որից կարող է օգտվել՝

1) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կամ Արցախի Հանրապետության փաստաբանների պալատի անդամ հանդիսացող փաստաբանների զավակները, ամուսինները՝ 10 (տասը) տոկոսի չափով.

2) նույն հոսքի ժամանակահատվածում ՀՀ փաստաբանական դպրոցում սովորող ընտանիքի առնվազն երկու անդամները՝ (պապ, տատ, հայր, մայր, եղբայր, քույր, ամուսին), ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար 10 (տասը) տոկոսի չափով.

3) Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանությանը կամ Արցախյան պատերազմին մասնակցած և վիրավորում ստացած ունկնդիրները՝ 50 (հիսուն) տոկոսի չափով.

6. Խորհուրդն իրավասու է սահմանել ուսման վարձի զեղչի, արտոնությունների կիրառման այլ դեպքեր:

7. Անվճար հիմունքներով կամ ուսման վարձի զեղչի իրավունքից օգտվելու համար ընդունելության քննության արդյունքների ամփոփումից հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում, ունկնդիրը Տնօրենին պետք է ներկայացնի համապատասխան փաստաթղթեր, որպեսզի հավաստվի ունկնդրի՝ անվճար

հիմունքով սովորելու, ուսման վարձի զեղչի իրավունք ունենալու հանգամանքների առկայությունը:

Տնօրենը, ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը (անվճար հիմունքներով սովորելու, ուսման վարձի զեղչի, արտոնությունների), ողջամիտ ժամկետում ընդունում է համապատասխան որոշում:

8. Այն դեպքում, երբ Խորհրդի սահմանած տեղերի շրջանակում անվճար հիմունքներով սովորելու վերջին տեղին հավակնում են մեկից ավելի ունկնդիրներ, ապա նրանց ընտրությունը կատարվում է ստորև նշված չափանիշներին համապատասխան (ըստ հերթականության)`

1) ընդունելության քննության (բանավոր և գրավոր միասին) ավելի բարձր միավոր գրանցած ունկնդիրը.

2) կրթական ավելի բարձր աստիճան ունեցող ունկնդիրը.

3) մշտական եկամուտ չունեցող ունկնդիրը: